Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 574 - Ա
որոշման

«ՎԱՆԱՁՈՐՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի զբոսաշրջային պոտենցիալի լիարժեք իրացման նպատակով հյուրընկալության և սպասարկման ոլորտների մասնագետների վերապատրաստման կենտրոնի կառուցում: Կառուցված կենտրոնում ուսուցումն իրականացվելու ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանությամբ՝ անվճար հիմունքներով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	1) Ճապոնիայի կառավարությունը ի դեմս Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանության (Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաբայան 23/4). 2) «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպություն (Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Ամիրյան փողոց, շենք 12, բնակարան 29, ՀՎՀՀ՝ 02577713):
4.	Ծրագիրը կատարողը	«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպություն (Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Ամիրյան փողոց, շենք 12, բնակարան 29, ՀՎՀՀ՝ 02577713)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Վանաձոր համայնք, քաղ. Վանաձոր,

		Գարեգին Նժդեհի 45/1, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 51,233,680 դրամ, որից՝ 1) 39,670,220.30 դրամը Ճապոնիայի դեսպանատուն. 2) 11,563,459.7 դրամը «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպություն:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչություն, հատկապես սոցիալապես խոցելի, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք, 18-29 տարեկան չսովորող և չաշխատող երիտասարդներ, միջին տարիքի (30-40) կանայք, անապահով ճանաչված ընտանիքների անդամներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հուլիսի 20-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Վանաձորում հյուրընկալության ծառայությունների մասնագիտական ուսուցման կենտրոնի շենքի կառուցում՝ 41,260,425 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հուլիսի 20-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը. 2) Վանաձորում հյուրընկալության ծառայությունների մասնագիտական ուսուցման կենտրոնի շենքի կառուցման գործընթացի հեղինակային հսկողություն, տեխնիկական հսկողություն՝ 1,072,771 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հուլիսի 20-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը. 3) Վանաձորում հյուրընկալության ծառայությունների մասնագիտական ուսուցման կենտրոնի շենքի ջրամատակարարման և կոյուղու, ներքին գազամատակարարման համակարգերի անցկացման, հրդեհի ազդարարման և օդափոխության համակարգերի տեղադրում՝ 5,117,680 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հուլիսի 20-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը. 4) Վանաձորում հյուրընկալության ծառայությունների մասնագիտական ուսուցման կենտրոնի շենքի կահավորում՝ 2,918,804 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հուլիսի 20-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը. 5) աուդիտորական ծառայությունների իրականացում՝ 864,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հուլիսի 20-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) կենտրոնի շենքի կառուցման աշխատանքների իրականացում (հողային աշխատանքներ, հիմքեր, պատեր, միաձույլ երկաթբետոնե կոնստրուկցիաներ (սյուներ, ծածկ, սանդղավանդակ), միջնորմներ, բացվածքներ, տանիք, մուտքի երեսպատման աշխատանքներ)՝ 41,260,425 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 2) կենտրոնի շենքի կառուցման հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացում՝ 1,072,771 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 3) կենտրոնի շենքի կահավորման աշխատանքների իրականացում (խոհանոցային և գրասենյակային գույք, խոհանոցային և գրասենյակային սարքավորումներ և կենցաղային տեխնիկա)՝ 2,918,804 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 4) կենտրոնի շենքի ջրամատակարարման և կոյուղու, ներքին գազամատակարարման համակարգերի անցկացման, հրդեհի ազդարարման և օդափոխության համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 5,117,680 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 5) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 864,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Միասնական սոցիալական ծառայության Լոռու մարզի տարածքային կենտրոններ, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմին, «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» հասարակական կազմակերպություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում գործող արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատան կողմից վերահսկողության իրականացում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

29.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ